

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՊՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆԱԽԱՐԱՐ

Մարտի 19-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու հրամանագրով, Թեա Ծուլուկիանին նշանակվել է Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար: Վարչապետի նույն հրամանագրով, Միխեիլ Չխենկելին նշանակվել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար:



Վարչապետի հրամանագրով մշակույթի նորանշանակ նախարարը պարտականությունների կատարմանը ձեռնամուխ եղավ մարտի 22-ից: Այդ օրը վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին աշխատանքային հանդիպում ունեցավ Թեա Ծուլուկիանիի հետ:

Թեա Ծուլուկիանիի ներկայացմամբ, նախարարի առաջին տեղակալի պաշտոնում նշանակվել է **Կախա Սիխարուլիձեն**, փոխնախարարներ են նշանակվել **Սոսո Գիրոզաձեն** եւ **Իոսեբ Բաղաթուրիան**:


Հիշեցնենք, որ մարտի 16-ին խորհրդարանը՝ 79 պատգամավորների ձայներով

աջակցեց մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարարության՝ որպես առանձին գերատեսչության տարանջատմանը, որի միավորը փոքր կառավարության հասկացության շրջանակներում 2018 թվականին նախաձեռնեց Վրաստանի նախկին վարչապետ Մամուկա Բախտաձեն:

Բարեփոխումից 2 տարի անց, կառավարությունը եկավ եզրակացության, որ գերատեսչությունները պետք է նորից առանձնանան:

Մշակույթի նորանշանակ նախարար

Թեա Ծուլուկիանին երկրի կառավարության ամենափորձառու նախարարներից է. կառավարության կազմում է 2012-ից: Աշխատել է կառավարության հինգ ղեկավարների՝ Բիժինա Իվանիշվիլու, Իրակլի Դարիբաշվիլու, Գիորգի Կվիրիկաշվիլու, Մամուկա Բախտաձեի եւ Գիորգի Գախարիայի հետ:



ԱՄՆ ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ ԿՈԼՈՐԱԴՊՅՈՒՄ ՄԱՐՁՅԵԼ Է 10 ՄԱՐԴ

Մարտի 22-ին Կոլորադոյի նահանգի Բոուլդեր քաղաքի King Soopers սուպերմարկետում տեղի ունեցած հրաձգության հետևանքով զոհվել է առնվազն 10 մարդ: Ավելի ուշ հրձիգը ուղղվել է խանութի շենք: Ենթադրյալ հանցագործը ձերբակալված է: Հրաձիգի դրդապատճառներն անհայտ են, նրա ինքնությունը չեն հայտնում: Ոստիկանական վարչությունում նշեցին, որ միջադեպի հետաքննությունը կարող է զբաղեցնել մի քանի օր:

ՌՈՒՍԱՍՏԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ Է ՀԱՐՈՒՑԵԼ 23 ՌՈՒՍ ԵՐԳԻՉՆԵՐԻ ԴԵՄ

Ուկրաինան ռուս 23 երգիչների դեմ հարուցել է քրեական գործ: Խոսքն այն երգիչների մասին է, ովքեր այցելել են Ղրիմ եւ հանդես եկել համերգային ծրագրով: Այդ երգիչների թվում են Գրիգորի Լեպսը, Պելագիան, Դենիս Մայդանովը, Օլգա Կորնուխինան եւ ուրիշներ:

ԹՈՒՐԶԻԱ ԼԻՐԱՆ ԿՏՐՈՒԿ ԱՐԺԵԶՐԿՎՈՒՄ Է

Թուրքիայի Կենտրոնական բանկի նախագահ Նաջի Աղբալին մարտի 20-ին ազատելու վերաբերյալ նախագահ Ռեջեփ Թայյիբ Էրդողանի որոշումից հետո, երկրի ազգային արժույթը թուրքական լիրան 14 տոկոսով անկում է ապրել՝ հասնելով 8,4 լիրայի՝ մեկ դոլարի դիմաց: Աղբալի փոխարեն ԿԲ նախագահի պաշտոնում նշանակվել է Շահափ Քավջըօղլուն: Սա վերջին երկու տարիների ընթացքում ԿԲ նախագահին փոխելու երրորդ դեպքն է: Ընդ որում, Աղբալին ազատելու պատճառների վերաբերյալ որեւէ պաշտոնական մեկնաբանություն չի տրվել:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ «ASTRAZENECA» ՊՍԿԱՍՏԱՆՅՈՒԹԸ ԶԻ ԱՐՏԱՅԱՆԿԻ

Եվրասիան ձեռնարկում է իր արտադրությանը իր արտադրանքները ԱստրաՅենեկի ընկերությանը սպառնացել է արգելել ընկերության կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի արտահանումը ԵՄ-ից: Նա հիշեցրել է, որ ընկերությունը տարվա սկզբից ԵՄ-ի երկրներ է ներմուծել խոտացված պատվաստանյութի ընդամենը 30 տոկոսը: Եվրասիան ձեռնարկում է իր արտադրանքները ԱստրաՅենեկի ընկերությանը սպառնացել է արգելել ընկերության կորոնավիրուսի դեմ պատվաստանյութի արտահանումը ԵՄ-ից:

ԻՍՐԱԵԼ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԱԹԱՆՅԱՐՈՒԻ «ԼԻԿՈՒԴ» ՀԱՂԹԵՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուի «Լիկուդ» կուսակցությունը հաղթեց Իսրայելում մարտի 23-ին կայացած խորհրդարանական ընտրություններում, բայց դրանք արդյունքներով կայուն կուլիցիայի եւ նոր կառավարության ստեղծումը քիչ հավանական է 24-րդ գումարման ապագա Կնեսետում (խորհրդարանում) տեղերի բաշխման պատճառով: Ընտրությունների արդյունքներով, Նաթանյահուի կողմնակիցների ծամբարը խորհրդարանի 120 մանդատից ստանում է 59 տեղ, իսկ Նաթանյահուի հակառակորդների դաշինքը՝ 56:

ՃԱՆԱԶՎԱԾ ԴԱՇՆԱԿԱՅԱՐՈՒՅԻ ԷԼԻՍՈ ԲՈԼՔՎԱԶԵՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՐ

Վրաստանի խորհրդարանը, իր լիազույցումով, մշակույթի խորհրդարանական կոմիտեի նախագահի պաշտոնում ընտրեց ճանաչված դաշնակա հարուստի Էլիսա Բոլքվաձենին:

Նա այդ պաշտոնում փոխարինեց Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարար նշանակված Թեա Ծուլուկիանին:

Լիազույցումով նիստին հաջորդած կոմիտեի նիստի ընթացքում հաստատվեց հանձնաժողովի կանոնադրությունը, կոմիտեի նա-

խագահի առաջին տեղակալ ընտրվեց Իրակլի Մեզուրնիշվիլին, իսկ «Վրացական երազանք» խմբակցության քվոտայով տեղակալ նշանակվեց վրաց ճանաչված գրող Նոդար Դումբաձեի դուստր՝ Քեթեան Դումբաձեն:



ՇԱԼՎԱ ԼՈՄՍԱԶԵՆ՝ ԱՆԱԼՔԱԼՔԻՒ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ախալքալաքիի ոստիկանության վարչությունը Ռուլանդ Մելիքիձեի փոխարեն կզխավորի Շավլա Լոմսաձենին, իսկ վարչության պետի տեղակալի պաշտոնում՝ Հակոբ Մարաբյանին կփոխարինի Անդրանիկ Պետրոսյանը:

Շավլա Լոմսաձեն 2012-2015 թվականներին եղել է Ախալքալաքիի ոստիկանության պետի տեղակալ եւ հետաքննության բաժնի պետ, իսկ 2016 թվականին զբաղեցրել է Ախալքալաքիի ոս-

տիկանության վարչության պետի պաշտոնը: Նոր ոստիկանապետը ծնունդով ախալքալաքցի, վրաց ճանաչված կենսաբան, ակադեմիկոս, Վրաստանի խորհրդարանի նախկին անդամ Բորիս Լոմսաձեի եղբոր որդին է:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՎ ԾՈՎԻ ՏԱՐԱԾԱՆԵՐՉԱՆՈՒՄ

Նման տեսակետ արտահայտվեց մարտի 23-ին, Ամերիկայի Միացյալ Նահանգների Սենատում, Եվրոպայի եւ տարածաշրջանային համագործակցության ենթահանձնաժողովում՝ Վրաստանի վերաբերյալ լսումներին:

Լսումներին մասնակից թե՛ ժողովրդավարական եւ թե՛ հանրապետական օրենսդիրները միաձայն ընդգծեցին ԱՄՆ-ի համար Վրաստանի հետ համագործակցության ռազմավարական բնույթը եւ պատրաստակամությունը հայտնեցին առավել նպաստել հարաբերությունների խորացմանը:

Լսումներին սենատորներն անդրադարձան 2012 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո երկրում

իրականացված բարեփոխումներին, եվրատլանտյան կառույցներին անդամագրմանը, Ռուսաստանի կողմից Վրաստանի տարածքների բռնազավթմանը, ինչպես նաեւ Վրաստանի ընդդիմության կողմից 2020 թվականի ընտրությունների արդյունքների վիճարկմանն ու կառավարող թիմի եւ ընդդիմության միջեւ փոխզիջման հասնելու անհրաժեշտությանը:

Սենատորները կրկին ընդգծեցին իրենց դիրքորոշումը Վրաստանի տարածքային

ամբողջականության հարցում:

Նշվեց, որ ԱՄՆ-ը կշարունակի աջակցել ազատ եւ ժողովրդավարական Վրաստանին, թեպետ, ընդգծվեց նաեւ տեղում քաղաքական կուսակցությունների միջեւ երկխոսության, բանակցային գործընթացի անհրաժեշտությունը, ինչը հնարավորություն կընձեռի կարգավորել երկրում առկա քաղաքական լարվածությունը:

Ընդունված բանաձեռում սենատորները Վրաստանի քաղաքական կուսակցությունների ղեկավարներին կոչ արեցին հասնել համաձայնության եւ լուծել արդեն շուրջ հինգ ամիս ձգձգվող դիմակայությունը:

ԱՄՆ ՍԵՆԱՏԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԱՐԱԲՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, արձագանքելով ԱՄՆ Սենատի կողմից Վրաստանի վերաբերյալ լսումների արդյունքում ընդունած հայտարարությանը, նշեց, որ ԱՄՆ-ի Սենատում արված հայտարարությունները մեկ անգամ եւս ցույց են տալիս, որ Ամերիկայի համար Վրաստանը տարածաշրջանում կարեւոր գործընկերներից մեկն է:

- Նշված լսումները եւ այնտեղ կատարված գնահատականները մեկ անգամ եւս ցույց են տալիս, որ Վրաստանը տարածաշրջանում Միացյալ Նահանգների համար ամենակարեւոր գործընկերներից մեկն է: Նաեւ բոլոր շահարկումներն ավարտվեցին մշակված հայտարարություններով, եւ ամենակարեւորը դրանք ավարտվեցին մի տեսակ անհեթեթ զրպարտությամբ, ցանկացած թեմայի շուրջ շահարկումներով, որոնք մենք լսում էինք ընդդիմության ներկայացուցիչներից:

Սենք պատրաստ ենք կարճ ժամանակում իրականացնել ընտրական բարեփոխումներ, արդարադատության բարեփոխումներ եւ հաշվի առնել բոլոր հանձնարարականները, որոնք ներկայացվել են ԱՄՆ-ի Սենատում,- հայտարարեց Իրակլի Դարիբաշվիլին:

ՓՈՒՑԻԶՄԱՆ ԿՈՉ ԱՄՆ ՍԵՆԱՏՈՐՆԵՐԻՑ

Վրաստանի ընդդիմության ներկայացուցիչների կողմից ԱՄՆ Սենատի հայտարարությունն ընկալվեց՝ որպես դիտողություն իշխանություններին, որը, ըստ նրանց, մտադիր չէ դիմել փոխզիջման:

«Ազգային շարժման» ներկայացուցիչ Գիգի Ծերեթելի կարծիքով, սենատորների զգուշացումը խիստ մտահո-

գիչ է, քանի որ այն կարող է ուղղակիորեն անդրադառնալ Վրաստանի նկատմամբ ԱՄՆ դիրքորոշման վրա: «Ռազ-

մավարությունը՝ շինարար» կուսակցության ղեկավար Գրիգոլ Վաչաձեի հավաստմամբ, Սենատի հայտարարությունից հետո՝ իշխանությունները ստիպված կինեն վերանայել իրենց դիրքորոշումն արտահերթ ընտրությունների անցկացման վերաբերյալ:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԵՒ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՎԵՐԱՆՈՐՈԳՎԱԾ ՕՂԱՆԱԿԱԿԱՅԱՆԸ

Մարտի 25-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, Էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, պաշտոնատար այլ անձինք մասնակցեցին Բաթումի հիմնովին վերանորոգված օդանավակայանի բացման հանդիսավոր արարողությանը:



Ռազմավարական նշանակության այդ ենթակառուցվածքի վերանորոգման նախագծում բուրքակայան TAV Georgia-ն, ինչպես նաեւ իսրայելական ու ֆրանսիական ընկերությունները ներդրել են 17 միլիոն դոլար՝ ընդլայնելով օդանավակայանի տերմինալը, որն այժմ կկարողանա տարեկան սպասարկել 1,2 միլիոն ուղևորի:

հայտնեց, որ Աջարիան արդեն պատրաստ է ընդունել զբոսաշրջիկներին: - Այսօր Իսրայելից ուղիղ թռիչքներն արդեն սկսվել են եւ կավելացվեն ամենօրյա թռիչքներ Թուրքիայից: Աջարիան պատրաստ է ընդունել զբոսաշրջիկներին: Շատ կարելի է, որ ներդրումներն արվել են համավարակի ընթացքում՝ շատ կարճ ժամանակում: Ընկերությունն աշխատանքն ավարտել է վեց ամսվա ընթացքում,- ասաց Իրակլի Դարիբաշվիլին:

ՕՐԵՆԱԴԻՐ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐՎԱՅԱՆՎԵՅԻՆ ԽՈՐՀՐԳԱՐԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

խությունների ընդունման համար անհրաժեշտ է առնվազն 113 պատգամավորի աջակցությունը: Իսկ ներկայիս 10-րդ գումարման խորհրդարանում 150 պատգամավորից մասնակցությունը վերապահվող իրավասություններից օգտվում է միայն 96-ը, որից 90-ը ներկայացնում են կառավարող «Վրա-

ցական երազանքը», իսկ 2-ը՝ «Քաղաքացիներ», 4-ը՝ «Եվրոպական սոցիալիստներ» ընդդիմադիր կուսակցությունները: Գեորգիա, վերոնշյալ փոփոխությունները, մասնավորապես, ընտրական շեմի իջեցումը պահանջում են այլ ընդդիմադիր պատգամավորների աջակցությունը: Կոնկրետ, այն քաղաքական կուսակցությունների, որոնք ներկայումս բոլորում են խորհրդարանը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ



ՎՐԱՍԱՆՈՒՄ ՀԱՅՑ ԶԻ ԹԱՆԿԱՆԱ

Առաջիկա երեք ամիսներին ցորենի այլուրի սուբսիդավորման պետական ծրագիրը կշարունակվի:

Վրաստանի կառավարությունը հարցի թանկացումից խուսափելու համար որոշում է կայացրել՝ առաջին տեսակի այլուրի սուբսիդավորում, որն ուժի մեջ է մինչև մարտի վերջը: Սկզբում 50 կգ-ա-

նոց պարկի առաջին տեսակի այլուրի համար սուբսիդավորումը կազմում էր 10, ապա որոշվեց՝ 15 լարի: Նշենք, որ ցորենի վատ բերքը, համավարակն ու դրանով պայմանավորված տնտեսական ճգնաժամը, լարիի փոխարժեքի տատանումը հանգեցրել էին

այլուրի թանկացմանը: Նախորդ դեկտեմբերից 4 ամսով հաստատվեց այլուրի սուբսիդավորումը, եւ հացի գինը չփոխվեց: Մի պարկ այլուրի համար գինը սահմանվել է 53 լարի (մոտ 16 դոլար): Այսինքն, այն արտադրող ընկերությունները, որոնք 53 լարիով այլուր կվաճառեն հաց արտադրողներին, կստանան պետական սուբսիդավորում: Մրցութին մասնակցել է 10, հաղթել՝ 8 ընկերություն:

ՎՐԱՍԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՂ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ՝ 4000-ԱԿԱՆ ԼԱՐԻ

Վրաստանի առողջապահության, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը, երկիր վերադարձող 200 քաղաքացու կֆինանսավորի 4000-ական լարիով:

Աջակցությունն իրականացվում է Վրաստանի փախստականների, էմիգրանտների գործակալության վերահստերման օգնության պետական ծրագրի շրջանակներում:

«Ծրագրի նպատակն է աջակցել միգրացիայից վերադարձած Վրաստանի քաղաքացիների վերաինտեգրման գործընթացին: Վերաինտեգրման աջակցության ծրագիրը եկամտի աղբյուրի եւ ինքնազբաղվածության երաշխիք է տալիս, ենթադրում է մասնագիտական կրթություն, բժշկական օգնություն ու ժամանակավոր կացարան»,- նշված է հաղորդագրության մեջ:

Առավելագույնը 4000 լարի դրամաշնորհը հնարավոր է ստանալ ինչպես գործունեությունը սկսելու, այնպես էլ՝ ընդլայնելու դեպքում: Ծրագրին կարող են մասնակցել Վրաստանի այն քաղաքացիները, որոնք մեկ տարուց ավելի գտնվել են երկրի սահմաններից դուրս՝ ապօրինի կերպով կամ դիմում են ներկայացրել օրենս ստանալու նպատակով, կամ էլ՝ օգտվում են օրենսհից:

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ ՆՈՎՐՈՒՉ ԲԱՅՐԱՄԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Նովրուզ Բայրամի (Նոր լույս) կապակցությամբ Վրաստանի նախագահ Սալուստե Զուրաբիշվիլին, վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն շնորհավորել են երկրի աղբյուրների բնակիչներին:

Տոնի առիթով Իրակլի Դարիբաշվիլին, Հաշտեցման եւ քաղաքացիական հավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվեղիանին, Քվեմո Բարթիկի նախագահ պետ Շոթա Ռեխվիաշվիլին, ինչպես նաեւ մեծամասնական պատգամավորները հանդիպում ունեցան աղբյուրների համաքաղաքացիների հետ:

ԳԻՐԳԻ ԳԱՆԱՐԻԱՆ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է

Ընթացիկ տարվա փետրվարի 18-ին, կառավարող թիմի հետ տարածայնությունների պատճառով, վարչապետի պաշտոնից հեռացած Գիրգի Գախարիան, մարտի 22-ին, իր անձնական թվիթերում, գրեց, որ մնում է վրացական քաղաքականության մեջ եւ ներկայումս աշխատում է քաղաքական օրակարգի վրա:



«Այսօր ես հայտարարեցի, որ մնում եմ վրացական քաղաքականության մեջ: Վրաստանին անհրաժեշտ է քաղաքական բեւեռացում եւ եվրոպական ապագայի իրական օրակարգ: Ես ոչ մի տեղ չեմ գնում, ավելին, չեմ հեռանա քաղաքականությունից, մենք շուտով կհանդիպենք»,- գրեց Գիրգի Գախարիան:

ԿԱՆԱ ՍԱԲԱՆԱԶՆ ԴԱՇՏՈՆԱԹՐ ԵՐԱԿ

Մարտի 23-ին Վրաստանի ՆԳ նախարարի տեղակալի պաշտոնից հեռացավ Կախա Սաբանաձեն: «Վերջին օրերին լրատվամիջոցներում ցուցադրած սյուժեների պատճառով, պաշտոնաթող եմ լինում, որպեսզի իրականացվի օբյեկտիվ հետաքննություն, որն էլ կհաստատի ճշմարտությունը»,- ֆեյսբուքյան իր էջում գրառել է Կախա Սաբանաձեն:



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ

ՀԱՐԿԱՏՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉ ԳՐԱՆՎԵԼԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՆԱԵՎ ՏԵՍԱԶԱՆԳԻ ՄԻՋՈՑՈՎ

Հարկատու ֆիզիկական անձ գրանցվելն այսուհետ հնարավոր կլինի տեսազանգի միջոցով: Այդ մասին տեղեկատվություն է տարածել ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը:

«Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը հարկատուներին առաջարկում է նորություն: Գերատեսչությունում արդեն ներդրված մինչեւ 400 էլեկտրոնային ծառայությանը, ավելացել է ֆիզիկական անձի (բացառությամբ՝ անհատ ձեռնարկատիրոջ) որպես հարկ վճարողի գրանցման ծառայությունը: Այս նորույթն իրականաց-

վել է Վրաստանի ֆինանսների նախարարի հրամանում փոփոխություն կատարելու արդյունքում: Եկամուտների ծառայությունը տեղեկացնում է ձեզ, որ տեսազանգն ակտիվացնելու համար, պետք է մուտք գործել գերատեսչության կողմից ստեղծված՝ videocall.rs.ge կայք»,- նշում են գերատեսչությունում: Նրանց խոսքով, ֆիզիկա-

կան անձի որպես հարկ վճարողի գրանցման հետ մեկտեղ, նշված անձի համար կակտիվանա eservices.rs.ge էլեկտրոնային ծառայությունների էջը: «Այստեղ տեղեկացնում ենք ձեզ, որ տեսազանգի միջոցով հնարավոր է նաեւ օգտվել հետեւյալ ծառայություններից. Գրանցված օգտատիրոջ գաղտնաբառի վերականգնում. Լիազորված օգտատիրոջ էջում նշված հեռախոսահամարի փոփոխություն: Առաջարկում ենք տեսնել հղումները՝ rs.ge/LawNewsArchive?newsId=249 եւ eservices.rs.ge/Docs/RegistrationHelp.pdf?v1 Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայությունը դիմում է ձեզ, խնդրանքով. Վրաստանում կորոնավիրուսի հնարավոր տարածումը կանխելու եւ հանրային առողջապահության անվտանգությունը ապահովելու նպատակով, ինչպես նաեւ հաշվի առնելով առողջապահության նախարարության հանձնարարականները, հնարավորինս օգտագործել էլեկտրոնային ծառայությունները»,- հայտնում են եկամուտների ծառայությունից:

